# ԴԵՆԳԵ ՏԵՆԴ

Դենգե տենդը վիրուսից առաջացող հիվանդություն է, որը փոխանցվում է մարդկանց վարակված մոծակի խայթոցով: Այն տարածված է արևադարձային և մերձարևադարձային կլիմայական գոտիներում, ինչպիսիք են Կարիբյան ավազանը (ներառյալ Պուերտո Ռիկոն), Կենտրոնական և Հարավային Ամերիկան, Հարավարևելյան Ասիան և Խաղաղ օվկիանոսի կղզիները: Դուք, ամենայն հավանականությամբ, ձեռք կբերեք այս հիվանդությունը, երբ մեկնեք այս տարածքներ: Քանի որ դենգե տարածող մոծակների տեսակները տարածված են Միացյալ Նահանգների շատ տարածքներում, այստեղ փոխանցումը հնարավոր է: Միացյալ Նահանգների մայրցամաքային մասում բռնկումների մեծ մասը եղել է համեմատաբար փոքր և սահմանափակ:

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ

Դենգե վիրուսները մարդկանց փոխանցվում են վարակված Aedes aegypti կամ Aedes albopictus մոծակների խայթոցների միջոցով: Այս մոծակները սովորաբար ձվեր են դնում փոքր տարաներում եղած կանգուն ջրի մեջ: Այս մոծակները նախընտրում են խայթել մարդկանց և ապրում են ինչպես ներսում, այնպես էլ դրսում՝ մարդկանց մոտ: Նրանք խայթում են օրվա և գիշերվա ցանկացած ժամի: Դենգե վիրուսը մարդուց մարդուն ՉԻ փոխանցվում:

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

Դենգեով վարակված յուրաքանչյուր չորրորդ մարդը ախտանիշներ կունենա: Ախտանիշները սովորաբար հայտնվում են 5-7 օրվա ընթացքում: Ամենատարածված ախտանիշներն են ջերմությունը և հետևյալներից մեկը կամ մի քանիսը՝ գլխացավ, սրտխառնոց և փսխում, ցան, մկանների, հոդերի կամ ոսկորների ցավ և աչքի ցավ (սովորաբար աչքերի ետևում): Դենգեի ախտանիշները սովորաբար տևում են 2-7 օր: Մարդկանց մեծ մասը առողջանում է մոտ մեկ շաբաթ հետո: Դենգե ունեցող 20 մարդուց մեկի մոտ կարող է առաջանալ ծանր հիվանդություն, որը կարող է կյանքի համար վտանգավոր լինել:

## ԳԼԽԱՎՈՐ ԿԵՏԵՐ

- Դենգե տենդը հիվանդություն է, որը մարդկանց փոխանցվում է վարակված մոծակի խայթոցով:
- Այս հիվանդությունը բուժելու համար դեղամիջոց չկա:
- Դենգեով վարակվելը կանխելու լավագույն միջոցը մոծակների խայթոցներից խուսափելն է, հատկապես երբ այցելում եք այս հիվանդությամբ հայտնի վայրեր:
- Այս մոծակները խայթում են ցերեկն ու գիշերը և ապրում են ներսում ու դրսում:
- Օգտագործեք միջատներին վանող միջոցներ, հագեք երկարաթև վերնաշապիկներ ու տաբատներ և քայլեր ձեռնարկեք ներսում ու դրսում մոծակների դեմ պայքարելու համար:

www.publichealth.lacounty.gov
(Armenian)

County of Los Angeles Public Health

Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)

# ԴԵՆԳԵ ՏԵՆԴ

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ԲՈՒԺՎՈՒՄ

Այս հիվանդության բուժման համար հատուկ դեղամիջոցներ չկան: Կան դեղամիջոցներ, որոնք օգնում են ջերմության և ցավի դեպքում: Գոյություն ունի պատվաստանյութ դենգեի դեմ, բայց այն օգտագործման համար ՉԻ հաստատվել ԱՄՆ-ի այն ճամփորդների համար, ովքեր այցելում են մի տարածքում, որտեղ տարածված է դենգե տենդը, սակայն չեն ապրում այնտեղ:

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՆԽԵԼ ԱՅՍ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ



Դենգեով վարակվելը կանխելու լավագույն միջոցը մոծակների խայթոցներից խուսափելն է, հատկապես, երբ այցելում եք այս հիվանդությամբ հայտնի վայրեր: Մոծակների խայթոցներից խուսափելու համար օգտագործեք Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունում (EPA) գրանցված միջատներին վանող միջոց և կրեք երկարաթև վերնաշապիկներ ու երկար տաբատներ կամ հատուկ մոծակների խայթոցից խոսափելու համար մշակված հագուստ: Պաշտպանեք Ձեր տունը մոծակներից՝ օգտագործելով պատուհանների և դռների ցանցեր: Մոծակները ձվադրում են ջրում. ծածկեք կամ դուրս նետեք ջուր պարունակող իրերը, ինչպիսիք են դույլերը, ծաղկամանները, լողավազանները կամ աղբարկղերը:

## ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն (LACDPH)՝**
publichealth.lacounty.gov/acd/VectorDengue.htm

**Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (CDC)՝**
cdc.gov/dengue/

Հարցերի դեպքում կամ մոտակայքում կլինիկա կամ բժիշկ գտնելու համար զանգահարեք Հանրային Առողջության զանգերի կենտրոն՝ 833-540-0473:
Բաց է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:00-ն. ph.lacounty.gov

County of Los Angeles Public Health

(Armenian)